

ԶԿՆ.
~~Ա. Ա. 14. 08~~

Ա. 76

Գ. ՏԱՆԱԿԵՐՏԵԱՆ

**ԳԱՂՏՆԻ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՄԲ
ԸՆՏՐՈՒԱԾԸ**

Г. Танакертянъ
Тайной баллотир. избранный

Б А К У
Электрпечатня газ. „Баку“.
1911 г.

891.99
11 - 20

Арм.
2-3808a

2-3808a

AM-76
12 MAR 2011
BM

891.99
S-20

Գ. ՏԱՆԱԿԵՐՏԵԱՆ

**ԳԱՂՏՆԻ ՔՈՒԻԱՐԿՈՒԹԵԱՄԲ
ԸՆՏՐՈՒԱԾԸ**

Г. Танакертянь
Тайной баллотир. избранный

ИИВ. № 21336

БАКУ
Электрпечатня газ. „Баку“.
1911 г.

13.08.2013
1105



39983-63

—Մարթն ջան, վերագառնալով ծխական ժողովից, ուրախ-ուրախ դիմեց կնոջը Գերասիմ Արկադիչը, սիրելիս, շնորհաւորիր, վերջապէս անցայ, ընտրուեցի հոգաբարձութեան անդամ: Վաղուց էի փափագում, իրագործուեց, սն, որքան ուրախ եմ, արի, արի համբուրու ենք:

—Գերասիմ, ես քեզ չեմ հասկանում, ի՞նչ ընտրուեցիր:

—Է՛լի մոռացար, մի շաբաթ է, քեզ ամեն օր կրկնում եմ, որ հոգաբարձութեան անդամ պէտք է ընտրուեմ և շատերը խօսք են տուել, որ ինձ ձայն կը տան, և սուին, սն, որքան երջանիկ եմ. այժմ ես հասարակական գործիչ, մեծ մարդ եմ, փթեցի գրասենեակում: Արի հոգիս, արի, արի համբուրու ենք:

—Գերասիմ, հ՞ը, ուրեմն այսօրուանից դու մեծ մարդ ես, ազգային գործիչ: Օ՛ր, Կատիան և Մանիան նախանձից արաքուելու են: Ո՛րքան լաւ է ազգային գործիչ մարդ ունենալ: Գերասիմ ջան, արի մի բալ սարքենք, քեզ հետ ընտրուած

և հին ազգային գործիչներին էլ հրաւիրենք...
որքան լաւ կը լինի:

— Մարթն ջան, ինչ լաւ բան մտածեցիր:
Արի մէկէլ համբուրուենք:

— Հը, գերասիմ ջան, երբ սարքենք բայը,
շուտ անենք, թէ չէ՛ բոլոր մեծ մարդիկ ամա-
րանոց կը գնան:

— Եկող շաբաթ և ետ պէտք է սարքել:

— Գերասիմ, արի թողնենք, յուլիսին կիսա-
վողակում սարքենք, որ ուրիշ անգերից եկած
գաջնիկներն էլ իմանան, որ դու ազգային գոր-
ծիչ՝ մեծ մարդ ես:

— Չէ, Մարթն ջան, այնտեղ անյարմար է,
յարմարութիւններ չենք ունենալ, այստեղ լաւ է:

— Ուրեմն վաղը պէտք է վիզլիտնի կարտիչ-
կայ տպել տաս, չէ՞, վրան գրուած ազգային
գործիչ:

— Այո՛, այո՛, ինչպէս չէ, վաղը և ետ:

— Ռուսերէն, թէ հայերէն:

— Ի հարկէ, հայերէն. ինչ ետ ասում, չէ՞ որ
հայ գործիչ եմ:

— Բայց լաւ, ինչպէս որոշեցիր, բայը երբ
սարքենք:

— Եկող շաբաթ օրը:

— Գերասիմ ջան, գիտե՞ս կատիան ու Մա-
նիան ինչպէս են նախանձուելու: Դէ արի ցուցակ

կազմենք, թէ որոնց պէտք է հրաւիրենք և ինչ
պատրաստութիւններ պէտք է տեսնենք:

— Սիրելիս, դու գնա քո սենեակը և ծրա-
զրէր, իսկ Մարկոսին ուղարկիր մօտս. գործ
ունեմ հետք:

— Ո՛հ, որքան ուրախ եմ: Այս րօպէիս
ուղարկեմ քեզ մօտ Մարկոսին.

— Գերասիմ, դու ինձ կանչէ՛լ էիր:

— Լսիր, Մարկոս, երկու աշակերտ եմ
գտել քեզ համար, վաղուանից պարապուիր, ամեն
մի աշակերտի համար կը ստանաս 10 բուբլի:

— Ի՞նչ առարկաներից պէտք է պարապուեմ:

— Գիմնագայի II գասարանի բոլոր առար-
կաներից:

— Ի՞նչպէս կարելի է սաս բուբլով այդքան
առարկաներից պարապել:

— Ի հարկէ, տաս բուբլով չի կարելի այդ-
քան առարկաներից, բայց լսիր. ես խօսացել եմ
ամեն-մէկը երեսուն բուբլի, միայն թէ ամեն
մէկից վերցնում եմ քսան բուբլի՝ թէ իբրև վարձ
քո սպրելու, ուտելու և թէ նրա համար, որ ես
եմ գտել գասերը:

— Բայց լաւ, Գերասիմ, չէ որ պէտք է հա-
մարսարան գնամ, անա երկու տարի է վկայա-
կանը ծոցումս է, միջոց չ'ունենալու պատճա-

ոով չէ՞մ կարողանում գնալ, իսկ դու չես օգնում:

— Այս տարի էլ մի գնալ:

— Բայց չէ որ սովորել եմ ուզում և յետոյ տարիքս անցնում եմ. եթէ այդ դասերի փողը ամբողջովին ես վերցնեմ, այն ժամանակ վեց ամիս ապահովուած կը լինեմ, իսկ մնացած երեք ամիսը Աստուած ողորմած է:

— Համալսարան մի գնալ, մտիք մի տեղ ծառայելու

— Այժմ ամեն մէկը աշխատում է անպատճառ բարձրագոյն կրթութիւն ստանալ, որպէսզի կեանքի մէջ պէտքական լինի թէ մարդկութեան և թէ ապրի ինչպէս մարդ:

— Ի՞նչ է, որ ես համալսարան չեմ գնացել, չեմ կարողանում ապրել: Ո՞ր համալսարանաւարտ բժիշկ, փաստաբան և կամ ինժինեան է քննադէս ապրում, ի՞նչս է պակաս:

— Ձէ որ բոլորը այդ բողոքին չեն արժանանում: Այն դարը անցաւ, որ քեզպէսները կարողանում էին մի քանի տարի ծառայելուց յետոյ բենտաների հետ խաղալ:

— Այժմ էլ կը խաղայ մարդս, եթէ խոնարհ լինի և սուր:

— Ի՞նչ է, մանելով գործի, — լսօգէյնի առաջ պէտք է քծնուել, սողալ, կեանքի մէջ երջանիկ լինելու համար:

— Այսպէս է, եթէ ուզում ես վաղուանից

պարագուիր, իսկ թէ ոչ, այն ժամանակ ես դասերը կը տամ Կիրակոսին և քեզ էլ ձրի չեմ պահիլ:

— Գերասիմ, խղճա՛, մեղք եմ, թող գոնէ քսանը ես ստանամ, իսկ մնացածը դու:

— Ձէ, չ'ի լինիլ, կարճ կտրիր, ժամանակ չ'ունեմ: Գնա՛ Կիրակոսին ուղարկիր մօտս:

— Գերասիմ, խղճա՛ ինձ, մի յուսահատիր, աջակցիր, ուսումս վերջացնեմ. դու չես օգնում քո միջոցներից, գոնէ կօղմնակի կերպով օգնիր: Ձէ որ եղբայրդ եմ, և այն էլ՝ հարազատ: Ենթադրենք որ եղբայրդ էլ չեմ, բայց չէ որ մարդիկ իրար պէտք է օգնեն, և որ գլխաւորն է, ինչպէս նոր Մարթա Պետրոզլան ինձ ասաց, դու ընարուել ես հոգաբարձական խորհրդի անգամ, որի ծրագիրը, եթէ ոչ աւելին, գոնէ այդ է քարոզում:

— Կարճ կտրիր, գլխիս աւետարան մի կարդալ: Դու այն որ այսօր գիտես, ես 20 տարի առաջ գիտէի: Դէ, գնա, Կիրակոսին ուղարկիր մօտս:

— Եղբայր, անգութ մի լինիլ, յիշիլ որ մի քանի տասնեակ բուբլով ծառայում էիր Բ. գրասենեակում և ինչպիսի իզէալիստն էիր, թերթ էիր հրատարակում, եղբայրութիւն քարոզում. յետ նայիր անցած ճանապարհդ:

— Այն, ճիշտ է, ես իզէալիստ էի երիտասարդ

ժամանակս: Այն ժամանակ չէի հասկանում: Դէ մի երկարացնիլ, զնա Կիրակոսին ուղարկիր մօտս:

—Օ՛, սակի, սակի, դու մարդկանց ինչերի չես կերպարանափոխում: Լաւ, Գերասիմ, այդ թողնենք, բայց չէ որ մենք 6000 ըուբլի դրամազլուխ ունենք հայրական տունը ծախելուց գոյացած, զոնէ նրա տոկոսները տուր զնամ սովորելու:

—Այո, ճիշտ է, ունենք, բայց այդ 6000 ըուբլին պէտք է բաժանենք չորս մասի. ուրի մի մասը, ի հարկէ, ինձ է հասնում, մնում է երեք մասը, որը անում է 4500 ըուբլի և ուրի տոկոսը անում է տարեկան մօտ երկու հարիւր ըուբլի: Այդ գումարից քեզ բաժին է ընկնում 70 ըուբլի, որով դու ոչինչ անել չես կարող

—Եղբայրներս և մայրիկը իրենց մասը տալիս են ինձ:

—Հապա իրենք ինչով պէտք է ապրեն, չէ որ ես պարտական չեմ նրանց կերակրելու:

—Գերասիմ, այդ վերջին յոյսս էլ մի կարիր, մեղք եմ:

—Այ, լսիր, այսպէս կանեմ. տոկոսներից հարիւր ըուբլի կը վերցնեմ մայրիկի մանր ծախսերի համար, իսկ մնացածը՝ կը տամ քեզ:

—Գերասիմ, հարիւր ըուբլին քո բուզժե-

տում մեծ գումար չէ, խնայիր ինձ, մի յուսահատեցնիլ:

—Մի երկարացնիլ, զնա Կիրակոսին կանչիր:

—Լաւ, զոնէ դասերի փողի կէսը տուր ինձ, իսկ կէսը քեզ:

—Լաւ, կէսը համաձայն եմ տալու: Գնա՛ վաղուանից պարապիր:

Առաւօտ էր. Գերասիմը նստած առանձնասենեակում օրուայ պոստով ստացած նամակներն էր կարդում, երբ ներս եկաւ կինը:

—Մարթա, կարգա՛, տես ինչ է գրուած այս անստորագիրը նամակում: Միթէ ճիշտ է այս բոլորը: Միթէ դու ինչ որ մէկի հետ յարաբերութեան մէջ ես:

—Ի՞նչ է, տեսնեմ ով է գրողը: Գերասիմ, և դու հաւատո՞ւմ ես այս բոլորին: Լրբեր, ինչեր են թոյլ տալիս իրենց. Կատիայի և Մանիայի բանը կը լինի, նրանք կը լինեն նախանձից գրել. ս՛հ. լրբեր, լրբեր:

—Մարթա, դու արի խոստովանուիր, այստեղ մի բան կայ:

—Գերասիմ, և դու թոյլ ես տալիս քեզ ինձ վրայ կասկածելու:

—Ոչ, սիրելիս, ես կատակ եմ անում: Միթէ

ես չեմ հասկանում, որ այս Կատիայի և Մանիայի բանն է, որոնք նախանձից, որ դու ազգային զործչի կլինես, և այսուհետև յարգանք պէտք է վայելես ժողովրդի մէջ, ուզում ենք քեզ վարկաբեկ անել:

—Այն, այն, այդ Կատիայի և Մանիայի բանն է, իրանք որ ուրիշները հետ են, կարծում են, որ բոլորն էլ իրենց պէս են:

—Մարթն ջան, թող որքան ուզում են գրեն, սով է ուշագրութիւն գարձնողը:

—Գերասիմ, սիրելիս, եկել էի քեզ բան ասելու, բայց դու ինձ շմեցրիր և ես մոռացայ ասելիքս: Հնչ, Գերասիմ ջան, փշացած ատամն շատ է նեղացնում, հարկաւոր է լքցնել տալ. Հռիփսիմէն իրենը լքցնել է տուել ատամնաբոյժ Նիբիրդի մօտ, և որին շատ գովում է. արի իմն էլ նրա մօտ լքցնել տանք: Մի քանի օր առաջ ծանօթացայ պատահամբ այդ ատամնաբուժի հետ, շատ լաւ կլինէ, բարի և, ըստ երևոյթին, շատ բարեխիղճ:

—Հնչ, հնչ, եթէ ցաւում է, անպատճառ պէտք է լքցնել տալ: Վաղը և ետ գնա և լքցնել տուր:

—Գերասիմ ջան, իսկ դու չե՞ս գալու միասին գնանք, միասին էլ գանք: Ես կը գնամ առաւօտները ժամը 11-ին:

—Սիրելիս, դու մի ախպիսի ժամ ես ընտրել, երբ ես զբաղուած եմ լինում:

—Գերասիմ, հոգիս, ես ճաշից յետոյ կը գնայի, երբ դու ազատ ես լինում, բայց շոգ է լինում, դժուար թէ մեզ յաջողուի կանոնաւոր ամեն օր գնալ:

—Շատ լաւ, շատ լաւ, գնա երբ քեզ յարմար է, ինչ արած, որ ես չեմ կարող գալ:

—Գիտե՞ս, Գերասիմ, այն օրը երբ ծանօթացայ ատամնաբուժ Նիբիրդի հետ, ես նրան հարցրի թէ քանի օր պէտք է գնամ դամ մինչև ատամն լքցնելը. նա ասաց, որ հիմնաւոր լքցնելու համար՝ առնուազն 15 օր:

—Քսան օր գնա, միայն թէ լաւ լքցնի:

—Գերասիմ ջան, ուրեմն վաղուանից գնամ: Բայց սրբան կը ցանկանայի, որ դու հետս լինէիր:

—Ոչինչ, միայնակ գնա:

—Վերջում ինձ հետ կը գաս, չէ՞, որ քո ատամներն էլ մաքրել տանք:

—Շատ լաւ, շատ լաւ:

—Գերասիմ, ինչ ես կարծում,—վաղը սր հագուստովս գնամ ատամնաբուժի մօտ:

—Ի հարկէ, նրանով, որ Փարիզում կարել տուինք, նա լաւն է:

—Չէ, ուզում եմ գլատիկ կարիչներովն հագնեմ, նա լաւ է, եթէ Փարիզում կարածը

հագնեմ, վախենում եմ ատամնաբուժը ատամս մաքրելիս ճկլի:

— Սիրելիս, որը ուզում ես, նա էլ հազիր:

— Կարիչնեկին կը հագնեմ: Գնամ հազուստս պատրաստեմ, վաղուց է չեմ հագել, տեսնեմ, կարելի է պակաս բան ունի:

— Որդի, Գերասիմ, ինչո՞ւ Մարկոսին չես թողնում իր նպատակին հասնի, թող, խնդրում եմ, դասերի ամբողջ երեսուն բուբլին ինքը վերցնի:

— Չէ, մայրիկ, չեմ կարող. քանդուկեցի գնաց. ես պարտաւոր չեմ նրան ձրի պահելու:

— Ժամանակ և հնարաւորութիւն տուր նրան ուսումը վերջացնելու, այն ժամանակ նա բոլորը կը վերադարձի և ինձ էլ ինքը կ'պահի:

— Չէ, չեմ կարող, ինչպէս ասացի, այնպէս էլ կ'անեմ. կէսը իրեն կը տամ, կէսն էլ ես կը վերցնեմ: Դէս Կիրակոսին էլ պէտք է ստիպեմ, որպէսզի դասեր գտնի իրա համար, հերիք է որքան ձրի կերակրեցի:

— Գերասիմ, ամօթ է, լսողները ի՞նչ կ'ասեն. դու քո հարազատ մօրդ և եղբայրներդ չես ուզում կերակրել, բայց ուզում ես հոգևորդի վերցնել: Դեռ եղբայրներիդ օգնիր, մինչև Աս-

տուած ողորմած է, քեզ էլ որդի կը լինի, դեռ շահիլ էք, ինչ կայ:

— Հա եղբայրներիս օգնեմ, ինչպէս չէ. Պետրոս եղբօրս էլ օգնեցի. համալսարանում սովորելիս ուղարկեցի նրա համար երեք տարուայ ընթացքում 1800 բուբլի, իսկ նա աւարտելուց յետոյ ինձ վերադարձրեց միայն 1500 բուբլի, իսկ երեք հարիւր բուբլիս կերաւ:

— Գերասիմ, ամօթ է, պատերը ամօթից կարմրում են, իսկ դու չես ամաչում. ի՞նչ կ'լինի, որ եղբօրդ վրայ երեք հարիւր բուբլի փող ծախսած լինես, ուրիշները հազարներ են ծախսում:

— Հերիք է, զահլես մի տանիր. ասացի չեմ կարող: Փարիզի յայտնի ակուշերկա—բժիշկը ասաց, որ մեզ երեխայ չի լինիլ, այդ պատճառով էլ ես ուզում եմ հոգևորդի վերցնեմ, որպէսզի իմ ուղածի պէս կրթեմ:

— Գերասիմ, լաւ, եթէ այդպէս է, այն ժամանակ գոնէ այն 6000 բուբլու տոկոսները տուր Մարկոսին գնա սովորելու:

— Չէ, նրան միայն մի հարիւր բուբլին կ'տամ, իսկ հարիւրը կը պահեմ քո մանր ծախսերի համար:

— Ուրեմն խնայում ես ինձ վրայ ծախսել տարեկան մի հարիւր բուբլի:

— Քանդուկեցի գնաց:

— Ես այս բոլորը տանել չեմ կարող, եթէ

այգպէս է, այն ժամանակ խոստացիր, որ ինձ համար ամսական մի բան կ'ուղարկես, ես զնամ գիւղում ապրեմ:

—Քէֆիդ նայիր, եթէ ուղում ես,—զնա³նս կարող եմ ուղարկել ամսական միայն հինգ ռուբլի:

—Ամօթ է, Գերասիմ, հինգ ռուբլով ապրել կ'լինի՞. գոնէ ուղարկիր ամիսը քսան ռուբլի:

—Չէ, չեմ կարող. միայն կարող եմ ամենաշատը ամիսը 10 ռուբլի ուղարկել:

—Լաւ, աւելի լաւ է ցամաք հաց ուտելով ապրեմ, քան թէ այս խոյտառակութիւնները տեսնեմ: Շաբաթ օրը ես զնալու եմ:

—Շատ լաւ, զնա:

—Բարեւ, տիկին Նիբիրդ, ինչպէս էք. լաւ էք:

—Փառք Աստուծոյ, լաւ եմ, դո՞ւք ինչէք, Մարթա Պետրովնա:

—Շնորհակալ եմ, վերջապէս կարողացայ ամուսնուս համոզել, որ ատամս անհրաժեշտ է լքցնել և նա թոյլ տուեց:

—Ուրեմն գլխաւոր խոչընդոտի առաջն առել էք, շարունակութիւնը հեշտ է:

—Հ՞ը, Ս—ը այսօր եղել է ձեզ մօտ, թէ՞ ոչ. ինչ ասաց:

—Այսօր նա չի եղել. նա ինձ մօտ էր երեկ չէ անցեալ օրը և ժամագիր ենք եղել վաղն առաւօտեան ժամը 10-ին:

—Դուք վաղը նրան ասացէք, որ ես գալու եմ առաւօտները ժամը 11-ին:

—Ինչո՞ւ երեկոները չէք գալիս:

—Գիտէ՞ք, տիկին, ես դիտմամբ այնպիսի ժամեր եմ ընտրել, երբ ամուսինս զբաղուած է լինում և չի կարող ինձ հետ գալ:

—Հասկացայ, գործի օգտի համար էք այդ ժամերը ընտրել: Շատ փորձուածն էք երևում:

—Գիտէ՞ք, տիկին, մի քանի օր առաջ ամուսինս մի անստորագիր նամակ է ստանում, որտեղ յայտնում են, որ ես ինչ որ մէկի հետ յարաբերութեան մէջ եմ: Մի այնպիսի դիրք բռնեցի և խօսակցութեան սօն վերցրի, որ քիչ մնաց ամասնուս անհատաւորիմ դուրս բերեմ: Հն, ո՞ր սենեակն էք գնելու իմ և Ս—ի տրամագրութեան տակ մեր տեսակցութիւնների համար:

—Իմ ննջարանը, որի մուտքը իմ առանձնասենեակից է, և որտեղ բացի ինձնից ոչ ոք չի մանի. լաւ յարմար սենեակ է:

—Այո, տեսել եմ, յարմար սենեակ է: Ուրեմն Ս—ին կ'ասէք, որ ժամը 10¹/₂-ին ինքը գայ, իսկ ես կ'գամ ժամը ուղիղ 11-ին. այն-

պէս լինի, որ մենք ոչ ընդունարանում, և ոչ էլ
գուրսը իրար չ'հանդիպենք:

—Միամիտ եղէք, Մարթն Պետրովսա.
այդ բոլորը կարգադրուած կ'լինի, առաջի ան-
գամը չէ, այդ գործում փորձուած եմ:

—Ուրեմն այդպէս, ես վաղը կ'գամ: Յ'տե-
սուե՞լին:

—Յ'տեսուե՞լին:



57806

Am D C

2007 /

2-3802a

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ